ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/26, 11.02.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Գազ Սուզան» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «035/GArm/20_4.2_5.4_092-002/20.12.19»

Գնման առարկան՝ Բնական գազի մեմբրանային հաշվիչների (G2.5-ից G160 ողջ տիրույթի), Elcor-M և Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորված բնական գազի մեմբրանային հաշվիչների (G10-ից G160 ողջ տիրույթի) ստուգաչափում, վերանորոգում և տրամաչափարկում, G10, G16, G25B գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով և անջատիչ կափույրներով, իսկ G25A-ից G160 գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորում և վերանորոգում, էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Պարտավորեցնել չկայացած ճանաչել գնման գործընթացը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ.ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Date: 11.02.2020
№:GS.009-dir
Page: 1-5

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Բողոքաբեր՝ «Գազ Սուզան» ՍՊԸ
Իրավաբանական և գործունեության հասցե՝
ՀՀ ք. Երևան Գրիբոյեդովի փ., 6/1

Պատվիրատու՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
ՀՀ ք. Երևան Թբիլիսյան խճուղի 43

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարիքների համար բնական գազի մեմբրանային հաշվիչների (G2.5-ից G160 ողջ տիրույթի), Elcor-M և Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորված բնական գազի մեմբրանային հաշվիչների (G10-ից G160 ողջ տիրույթի) ստուգաչափում, վերանորոգում և տրամաչափարկում, G10, G16, G25B գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով և անջատիչ կափույրներով, իսկ G25A-ից G160 գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորում և վերանորոգում, էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում:

ԲՈՂՈՔ

I. Գործի նախապատմությունը.

ՍՈՒՅՆ ԲՈՂՈՔՈՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ Է ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՉ ԹԵ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՀՐԱՎԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ:

Մենք գտնում ենք, որ Պատվիրատուն և հանձնաժողովը, հանձնաժողովը հանդիսանում է պատվիրատուի աշխատակիցները, կատարել են գնումների ընթացակարգի և օրենսդրությամբ խախտումներ: Գտնում ենք, որ անտեսել են այն հանգամանքը, որ Բողոք ներկայացնող անձը ներկայացրել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և ապացույցները, որոնք անտեսվել են, իսկ «Զեգա» ՍՊԸ-ն իր հայտը ներկայացրել է օրենքի խախտմամբ, չի ներկայացրել բոլոր փաստաթղթերը և նյութերը, որով Հանձնաժողովը պետք էր մերժեր «Զեգա» ՍՊԸ-ի հայտն ամբողջությամբ:

Բողոքաբերը մասնակցել է №035/GArm/20_4.2_5.4_092-002/20.12.19 ծածկագրով հայտարարված բաց առաջարկների հարցման ընթացակարգին:

30.01.2020թ. Պատվիրատուի կողմից կազմվել է բաց առաջարկների հարցման հանձնաժողովի արձանագրություն:

Արձանագրության մեջ նշվել է հետևյալը.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՅԻՑ N 5013
11 02 20
«—» 20— թ.
Республика Армения

Հայաստանի Հանրապետության,
0051 Երևան, Վրացական 5-րդ նրբանցք
Հեռ./Ֆաքս՝ (+374 10) 23 10 91
E-mail: gsa240561@mail.ru
URL: www.gsa.am

0051, г. Ереван, 5 пер.Вранцакан
Тел./Факс: (+374 10) 23 10 91
E-mail: gsa240561@mail.ru
URL: www.gsa.am

1. Գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման զանգակային կայանքի («Bell Prover test Beneh») տեսակի հաստատման N5453 վկայականի հավելված՝ տեսակի նկարագիրը բացակայում է

2. Պարզ չէ վերոհիշյալ կայանքի վրա միաժամանակ տեղակայման ենթակա հաշվիչների քանակը և ստուգաչափման տևողությունը, որը հնարավորություն կտար ունենալ տեղեկատվություն կնքվելիք պայմանագրով նախատեսված ծավալների սպասարկման հնարավորության վերաբերյալ:

3. «ETPC» տեսակի գազի ծավալի էլեկտրոնային ճշտիչի տեսակի հաստատման N1393 սերտիֆիկատի հավելված՝ տեսակի նկարագիրը բացակայում է:

4. «ETPC» տեսակի գազի ծավալի էլեկտրոնային ճշտիչի տեխնիկական բնութագրի փոխարեն ներկայացված է «տեխնիկական պահանջներ» անվամբ փաստաթուղթ, որում ամբողջությամբ կրկնված է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից ներկայացված «տեխնիկական բնութագրի» տեքստը: Ներկայացված չէ առաջարկվող «ETPC» տեսակի սարքի իրական տեխնիկական բնութագիրը կամ նրա անձնագիրը, այդ սարքերը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ համակարգում մինչ օրս չեն շահագործվել, համապատասխան մասնագետները չունեն այդ սարքերի հետ աշխատանքի փորձ, որը շատ կարևոր է բաժանորդների հետ առևտրային հարաբերություններում կիրառվող սարքերի համար:

5. G10-ից մինչև G160 գազահաշվիչները «ETPC» տեսակի գազի ծավալի էլեկտրոնային ճշտիչով կահավորման աշխատանքների ընթացքում օգտագործվող պահեստամասերի ցուցակի հետ համատեղ ներկայացված գծապատկերը չի հանդիսանում «ETPC» տեսակի էլեկտրոնային ճշտիչի տեղակայման գծապատկերը, իրականում հանդիսանում է այժմ փաստացի շահագործման մեջ գտնվող, «A-2» ՍՊԸ կողմից արտադրված Elcorr-M տեսակի էլեկտրոնային ճշտիչների տեղակայման արտատպված գծապատկերը:

«Գազ Սուզան» ՍՊԸ-ն չի ներկայացրել նախկինում կատարած նմանատիպ համանման առնվազն 50% մեկ պայմանագիր «Բնական գազի մեմբրանային հաշվիչների (G2.5-ից G160 ռոջ տիրույթի), Elcor-M և Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորված բնական գազի մեմբրանային հաշվիչների (G10-ից G160 ռոջ տիրույթի) ստուգաչափում, վերանորոգում և տրամաչափարկում, G10, G16, G25B գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով և անջատիչ կափույրներով, իսկ G25A-ից G160 գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորում և վերանորոգում» աշխատանքների ձեռքբերման համար, ինչպես նաև ներկայացված չէ առնվազն 50% նմանատիպ համանման մեկ պայմանագիր էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերման համար:

№:GS.009-dir
Page: 3-5

«Գազ Սուզան» ՍՊԸ-ն չի ներկայացրել նաև աշխատանքների ձեռքբերման համար բաց առաջարկների հարցման փաստաթղթերով պահանջված Աղյուսակ 58 (Elcor-M և Elcor-MU էլեկտրոնային ճշտիչների տրամաչափարկման աշխատանքներ) արժեքները, այլ ներկայացրել է միայն իր կողմից առաջարկվող էլեկտրոնային ճշտիչների տրամաչափարկման արժեքը, որը սակայն չի բավարարում բաց առաջարկների հարցման փաստաթղթերով պահանջված չափանիշներին, քանի որ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ պահեստում առկա են Elcor-M և Elcor-MU էլեկտրոնային ճշտիչներ, որոնք պետք է տրամաչափարկվեն:

30.01.2020թ. հրապարակվել է հայտարարություն՝ Պայմանագիր կնքելու որոշման մասին, որտեղ նշվել է.

«Պատվիրատուն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն, որը գտնվում է ք. Երևան Թբիլիսյան 43 հասցեում, ստորև ներկայացնում է №035/GArm/20_4.3_5.4_092-002/20.12.19 ծածկագրով բաց առաջարկների հարցման արդյունքում պայմանագրի կնքելու որոշման մասին համառոտ տեղեկատվություն: Բաց առաջարկների հարցման հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2020թվականի հունվարի 30-ի թիվ 3 արձանագրությամբ «Զեգա» ՍՊԸ-ին ճանաչել է №035/GArm/20_4.3_5.4_092-002/20.12.19 ծածկագրով բաց առաջարկների հարցման ընտրված մասնակից, որպես հրավերի պահանջներին համապատասխանող և գնային տեսանկյունից առավել ընդունելի առաջարկ ներկայացրած մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից 5–րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: №035/GArm/20_4.3_5.4_092-002/20.12.19 ծածկագրով բաց առաջարկների հարցման արդյունքներով ընտրված ընկերության և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի միջև կնքվելու է «Բնական գազի մեմբրանային հաշվիչների (G2.5-ից G160 ողջ տիրույթի), Elcor-M և Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորված բնական գազի մեմբրանային հաշվիչների (G10-ից G160 ողջ տիրույթի) ստուգաչափում, վերանորոգում և տրամաչափարկում, G10, G16 ,G25B գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով և անջատիչ կափույրներով, իսկ G25A-ից G160 գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորում և վերանորոգում, էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում» ձեռքբերման պայմանագիր՝ անգործության ժամկետը ավարտելուց հետո»:

Գտնում ենք, որ գնումների գործընթացը իրականացվել է մի շարք խախտումներով, որով պայմանավորված պետք է գնումը համարել չկայացած:

II. <u>Բողոքի հիմքերը ու հիմնավորումները.</u>

Այսպիսով, կներկայացվի բողոքի հիմքերը և հիմնավորումները:

Գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման զանգակային կայանքի («Bell Prover test Beneh») տեսակի հաստատման N5453 վկայականի հավելված՝ տեսակի նկարագիրը բացակայում է

№: GS.009-dir
Page: 4-5

Յանկանում ենք նշել, որ գնումների գործընթացին ներկայացրել ենք ստուգաչափման կայանքի սերտիֆիկատը, որը ուժի մեջ է մինչև 17.12.2024թ.: Նշել ենք, որ այն համապատասխանում է ГОСТУ Р 8.618 -2006 և ՄՕՁՄ 32, որը արձանագրվել է ռեգիստրացիայի փաստաթղթում: Ինչ վերաբերվում է նկարագրությանը, ապա դա գնման պահանջ չէ:

Պարզ չէ վերոհիշյալ կայանքի վրա միաժամանակ տեղակայման ենթակա հաշվիչների քանակը և ստուգաչափման տևողությունը, որը հնարավորություն կտար ունենալ տեղեկատվություն կնքվելիք պայմանագրով նախատեսված ծավալների սպասարկման հնարավորության վերաբերյալ:

Սույն հարցը փոխկապակցված է վերոգրյալ հարցին:

«ETPC» տեսակի գազի ծավալի էլեկտրոնային ճշտիչի տեսակի հաստատման N1393 սերտիֆիկատի հավելված՝ տեսակի նկարագիրը բացակայում է:

Մեր կողմից ներկայացվել է սերտիֆիկատ, որտեղ նշված է, որ այն համապատասխանում է Գոստին:

«ETPC» տեսակի գազի ծավալի էլեկտրոնային ճշտիչի տեխնիկական բնութագրի փոխարեն ներկայացված է «տեխնիկական պահանջներ» անվամբ փաստաթուղթ, որում ամբողջությամբ կրկնված է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից ներկայացված «տեխնիկական բնութագրի» տեքստը: Ներկայացված չէ առաջարկվող «ETPC» տեսակի սարքի իրական տեխնիկական բնութագիրը կամ նրա անձնագիրը, այդ սարքերը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ համակարգում մինչ օրս չեն շահագործվել, համապատասխան մասնագետները չունեն այդ սարքերի հետ աշխատանքի փորձ, որը շատ կարևոր է բաժանորդների հետ առևտրային հարաբերություններում կիրառվող սարքերի համար:

Յանկանում ենք նշել, որ 4,1 հավելվածը տեխնիկական նկարագրությանն է վերաբերվում, որը կատարվել է մեր կողմից: Իսկ ինչ վերաբերվում է մասնագիտացմանը, ապա կարող ենք իրականացնել սեմինարներ և այլ գործողություններ աշխատակիցներին կրթելու նպատակով:
Համամիտ չենք նաև 5-րդ կետի հետ, քանի որ ներկայացվել է սխեմաներ, որոնք վերաբերվում են Ելկոր Մու-ին, այսինքն՝ ինքնին դա ապօրինություն է և նշվել է ապրանքի անվանումը:
Գտնում ենք, որ 50 տոկոս փորձի նշում պարունակելը անօրինականություն է և չի համապատասխանում օրենքներին: Սա տնտեսական բարեխիղճ մրցակցության կանոնի խախտում է:

Հայաստանի Հանրապետության,
0051 Երևան, Վրացական 5-րդ նրբանցք
Հեռ./Ֆաքս՝ (+374 10) 23 10 91
E-mail: gsa240561@mail.ru
URL: www.gsa.am

Республика Армения
0051, г. Ереван, 5 пер.Врацакан
Тел./Факс: (+374 10) 23 10 91
E-mail: gsa240561@mail.ru
URL.: www.gsa.am

№: GS.009-dir
Page: 5-5

Գտնում ենք, որ «Զեգա» ՄՊԸ-ի փաստաթղթերը պատշաճ չեն, չեն ներկայացվել այն բոլոր փաստաթղթերը, որոնք իրականում պահանջվում էր գնումներով:
Մեր կողմից պատշաճ ներկայացվել է բոլոր արժեքները:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ կետի համապատասխան կայացնել համապատասխան որոշում՝ չկայացած ճանաչել գնման գործընթացը:

Կից ներկայացնում ենք՝

1. Պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի պատճենը (2 թերթ),
2. Սայեդմասիի Սայեդմորթեզա Այաթի անձնագրի՝ նոտարական վավերացմամբ պատճենը (2 թերթ),
3. Լիազորագրի պատճենը՝ Սայեդքահաեդին Սայեդհաշեմի Փուրհաշեմիի անունով՝ նոտարական վավերացմամբ (3 թերթ):

«Գազ Սուզան» ՍՊԸ

Տնօրեն՝ Ս. Փուրհաշեմի /_____/

Հայաստանի Հանրապետության,
0051 Երևան, Վրացական 5-րդ նրբանցք
Հեռ./Ֆաքս՝ (+374 10) 23 10 91
E-mail: gsa240561@mail.ru
URL: www.gsa.am

Республика Армения
0051, г. Ереван, 5 пер.Врацакан
Тел./Факс: (+374 10) 23 10 91
E-mail: gsa240561@mail.ru
URL: www.gsa.am